

ոոկ զօրեղ, ճշմարտութեան հաւատարիմ, դառնանք, նորան հա-  
ղորդելով աւելի կենդանի հաւատ, աւելի լոյս — յոյս, աւելի ա-  
մուր և յարատեւ սէր: Դառնանք նորա մօտ և թողի իմանայ այս  
աշխարհը, լսելով մեր խօսքը, տեսնելով մեր գործերն, որ մենք  
Եղիայի նման բարձրացել ենք սուրբ լերան գլուխն և այնտեղ լր-  
սել ենք Աստուծոյ ձայնը:

(ԲԵՐԱՔԵ)

## ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ

ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ ՎԵՐԱՅ.

(Շարունակութիւն)

Այսրկութեան ծագումն ընդհանրապէս մարդկա-  
յին սեռի մէջ և մասնաւորապէս նորա սկիզբն հին  
Եւրոպական հասարակապետութեանց մէջ:

Բովանդակութիւն. Ստրկութեան ծագման գժուար խնդիրը լրւծելու  
համար պէտք է դիմել նախնական ազգերի բարուց և սովորութեանց: —

Քաղաքակրթութեան ստոր աստիճանի վերայ գտանվող վայրենի ազգերն  
աւելի լաւ են համարում սպանել իրանց յաղթուած թշնամիներին. Քա-  
ղաքակրթութեան զարգացման հետ նոքա օգուտ քաղել են աշխատում  
իրանց գերիներից: Մրանց ստրկացնելով, Յունաստանում ստրկութիւնը  
ծագեցաւ նրանից: որ յաղթող եկաւորները ստրկացրին Եւրոպայի նուաճ-  
ուած բնիկներին:

Սորա օրինակը տուին Յոյներն, որոնք այս սովորութիւնը սովորցին և իրանց ժամանակակիցներին, ներքին պատերազմների ժամանակ։ — Սուրբ Կութեան զարգանալու հետ Յունաստանը ստանում է գերիներ Ասիայից և Եվրիկէից, — Ստրուկների վիճակը հին Յունաստանում բաւական տառելի է, Սպարտայում Խլոտները մշակում են երկիրն իրեւ կապալառուներ։ —

Աթէնքում ստրուկների վիճակն աւելի թեթև է ի շնորհս Աթենացւոց մեղմ բարուց և նոցա մարդասէր օրէնքների, — Ստրուկների բազմանալը Յունաստանում, — Ստրուկների աղատ դասակարգեր անցնելը, — Նախապատաշարմուկներ ստրկաց դէմ՝ բարբարոսաց դէմ։ Առաջաւոր մարդոց փորձերը ստրկութիւնը ջնջելու համար յաջողութիւն չեն ունենում, — Աղեքսանդր Մեծի աշխարհակալութիւնք զարգացնում են ստրկութիւնը Յունաստանում, — Յունաստանի անկումն մասամբ վերաբերելի է ստրկութեան զարգացման, — Հռովմում իրեւ ստրուկներ տարուած Յոյներն ապականում են հովովմէական հասարակութիւնը, պատրաստում են սորա համար նոյն վիճակն, որին իրանք ենթարկուեցան, — Հռովմի ընակիչք կազմուեցան առաւելապէս փախստական գերիներից, Հին Հռովմայեցւոց Խիստ սովորութիւնը արգելք են լինում ստրկութեան զարգացման ընդարձակ չափով հռովմէական հասարակապետութեան մէջ, — Նախկին Հռովմայեցիք յաղթուած թշնամիներին տեղափոխում են Հռովմ, իրեւ աղատ քաղաքացիներ, Մինչև որ ստրկութիւնն տիրապետող չէր, Հռովմն անդրդուելի էր, — Մինչև իսկ յետին ժամանակներում Հռովմայեցիք չեն տատանուում պատերազմի ժամանակ արտաքին թշնամեաց դէմ ստրուկներին զինաւորելու և նրանց աղատութիւն շնորհելու։ — Կարթագինէի և Յունաստանի նուաճումն նպաստում է ստրկութեան զարգացման Հռովմում ընդարձակ չափով։

Դիտնականք անհամաձայն են մարդկային սեռի մէջ ստրկութեան ծագման խնդրի վերաբերմամբ։ Կարծեմ, չենք սխալիլ եթէ, Բիօյի օրինակին հետևելով, այդ խնդրի լուծման համար դիմենք ներկայ վայրենիների կեանքին։ Ամերիկայի վայրենիք ներկայացնում են մեզ բնական ճիշդ պատկերը նախնական ստրկութեան։ Խը զարգացման առաջին աստիճանում վայրենին առաւելապէս պարապում է որսորդութեամբ և սորա մէջ է գտնում իւր գոյութիւնը պահպանելու միակ մի ջոցը։ Ամեն օտարական, որ մտնում է նորա որսորդու-

թեան տեղի շըջանը, բնականաբար նորա թշնամին պիտի համարուի, որովհետեւ նուազեցնում է նորա աւարի աղբիլը: Ուստի շըջանի նախկին տէրը աշխատում է ազատուելու իւր այս նորեկ ախոյեանից, նա սպանում է սրան: Կիսավայրենի վիճակի մէջ վայրենու առաջին և բնական ստրուկը նորա կինն է, որ կատարում է բոլոր ընտանեկան պարզ աշխատանքները:

Բայց ժամանակի ընթացքում որսի կենդանիք պակասում են և կամ հեռանում են այն երկրից, ուր բնակում է վայրենին և այս կարիքը ստիպում է վայրենուն ընտելացնել կենդանեաց, կազմել հօտեր: Այս ժամանակ վայրենին աւելի լաւ է համարում չափանել թշնամուն, այլ կենդանւոյն բռնել նրան և մահուան երկիւղ տալով ստիպել նրան, որ հովուական աշխատանքի բեռոք բառնայ նորա հետ միասին: Առա հետ թեթեանում է և վայրենու կող վիճակը, նա մշտական մշակից դառնում է հսկող ստրուկների վերայ: Երկարատեւ շըջանից յետ կենդանաբոյծ վայրենին դառնում է նստակեաց երկրագործ, բայց դեռ նա պահպանում է իւր պատերազմափրութիւնը և իւրաքանչիւր գերի դառնում է ստրուկ երկրագործ: Բայց ստրուկներից այս ձեռվ օգուտ քաղելու շըջանը շուտ չէ գալիս: Դեռ երկար ժամանակ վայրենին երկրի մշակութեան գործում բաւականանում է իւր անտրոտունջ ընտանեաց կամ ցեղի ծառայութեամբ:

Եւրոպայում՝ ստրկութիւնը ծագեցաւ երկրորդ ճանապարհով: Նոր ազգեր արշաւեցին ելլադա և նուաճելով նախնական ցեղերին, որոնք այնտեղ բնակում էին, ստրուկ — իլոտ դարձրին բնիկներին: Պլինիոս Աւագն ասում է, որ Յոյներից առաջինը Լակեդեմոնացիք հնաբեցին ստրկութիւնը: Ստրկութեան օգուտը փորձով տեսնելից յետ Յոյները սկսան գնել ստրուկներ ճարպիկ ծովային աւազակներից, որոնց թիւր ինչպէս և այժմ շատ էր Արշիպելագոսում: Արդէն Հոմերոսի մէջ հանդիպում ենք ակնարկութեան մի քանի ասիական և աֆրիկական քաղաքների վերայ, որոնք կենդրունատեղիք են գերեվաճառութեան:

Այսպիսի կենդրունատեղիներից մէկն էլ բերին Յովսէփին, Խորայելի որդուն: Ի միջի այլոց Յունաստանը շարունակ վրդովող պատերազմները զարդացրին ստրկութիւնը: Վեցերորդ դարում, Քրիս-

տոնէական թուականից առաջ, Սպարտացիք, յաղթելով Մեսսենայի ընակիչներին, սրանց ստրուկ դարձրին: Բացի սրանից Յունաստանում գոյութիւն ունէր և մի բարբարոսական սովորութիւն, որ հայրերին իրաւունք էր տալիս վաճառելու իրանց զաւակներին ի ստրկութիւն: Այսպէս տարածուած էր այս սովորութիւնն, որ իմաստուն Սողոնը կարողացաւ նրան միայն սահմանափակել, բայց ոչ բոլորովին ջնջել:

Բայց ստրուկների վիճակն երկու յոյն դլխաւոր հասարակապետութեանց մէջ (Աթէնք և Սպարտա) տարբեր էր: Եոյնը ժամանակ չունէր տնտեսութեամբ պարապելու, որովհետեւ նորա բոլոր ժամանակն անցնում էր կամ հասարակապետութեան գործերը վարելու և կամ նորան պաշտպանելու մէջ: Լակեդեմոնում ստրուկներն, էլոսի, Մեսսենայի և այլ քաղաքների գերած ընակիչներից, կատարում էին ընտանեկան գործերն և մշակում էին երկիրը: Այս վերջին զբաղմունքը յատուկ էր առաւելապէս իլուտներին, վարձակալների իրաւունքով, վճարելով չափաւոր կապալ, որն աւելացնել ոչոք Սպարտայի քաղաքացիներից չէր կամենում և չէր կարողանում հասարակաց կարծիքի երկիւղից, որպէս զի ագահ չերեկի: Կարծեմ այս գործում բաւական մեծ կշիռ ունեցաւ կիկուրդոսի դրած օրէնքնորոյ նպատակն էր առաջն առնել Սպարտայում բարուց ապականութեան, որ կարող էր ծագել ընդարձակ կալուածների և մեծ հարըստութեան կազմուելից: Այսպէս իլուտների վիճակը կարելի էր համարել տանելի, եթէ օրէնքը պաշտպանէր պարոնների կամայականութիւնից նոցա կեանքն ու ապահովութիւնը, բայց այս վերաբերութեամբ սպարտական օրէնքներն իլուտներին հաւասարեցնում էին զբաստներին. տէրը կարող էր նրանց ըստ կամաց ենթարկել տանջանաց և մինչեւ անգամ սպանել նրանց: Խրաւ է, այս ստրուկներին տէրը ըստ կամաց չէր կարող ծախսել և ոչ էլ մի այլ քաղաքացի կարող էր գնել նրանց. բայց իլուտներն, հասարակապետութեանցոյց տուած ծառայութեանց համար էլ, զոր օրինակ սխրագործութեանց համար պատերազմներում, ուր ուղեկցում էին նոքա իրանց պարոններին, նոքա ոչ միայն կարող էին ազատուել ստրկութիւնից, այլ մինչեւ անգամ դառնում էին, թէև ոչ հաւասար իրաւունքնե-

ըով, աղատ Սպարտացիք:

Սպարտայում շատ կային ազատ գերդաստաններ, որոնք ծագում էին ստրուկներից, թէև այս գերդաստանները չէին վայելում բոլոր իրաւունքներն, որոնք յատուկ էին բնիկ Սպարտացիներին։ Աթէնքում ստրկի ազատութիւնը բոլորովիմբ կախուած էր նորա պարոնից և այդ կատարուում էր շատ հեշտութեամբ։ Այս հասարակապետութենում ստրկի վիճակն այնպէս անմշտիթար չէր, ինչպէս Սպարտայում։ տէրն աւելի շուտ կարող էր ազատութիւն տալիւր ստրկին, քան հասարակութիւնն, որ նախանձախնդրութեամբ պաշտպանում էր իւր իրաւունքները ստրուկ ունենալու։ Պէտք է յիշել եւ այն, որ Աթենացւոց բնաւորութիւնը մեղմ էր և մարդասէր, նոյնպէս աչքի առաջ ունենալու է և այն, որ աթենացի ստրուկների շարքում կային շատ բնիկ Աթենացիք, որոնց ծնողները վաճառել էին ի ստրկութիւն և որոց քաղաքացւոց մեծամասնութիւնը համակրութիւն էր ցոյց տալիս։ Ցայտնի է մեզ, որ Աթենացիք չէին օգուտ քաղում իրաւունքից, որոնք տալիս էր նրանց օրէնքը ստրուկների վերաբերութեամբ։ Գիտենք, որ Աթենքում կար թէզէոսի տաճարն, ուր ապաստան էին գտնում ստրուկներն իրանց տէրերի խստութեանց դէմ և ուր նոքա ստանում էին օրինական բաւարարութիւն հալածանաց և նեղութեանց համար։ Լուցիոս Ակցիոս Աթենացոց վերաբերում է Սատուրնալեան տօնախմբութիւնքն, որոնց ժամանակ ստրուկն հաւասար էր տիրոջ։

Այս բոլորն ապացոյց է ստրուկների բաւական լաւ վիճակին Աթենքում։ Մի հասարակապետութեան յաղթութեամբ միւսի վերայ ստրուկներ ձեռք բերելու եղանակը մահաբեր հետեւանքներ ունեցաւ Յունաստանի համար։ Նոյն Պատէացիք, որոնք Օլիմպիական խաղերում իրեւ Պարսից յաղթողներ գովարանուեցան, քառասուն տարիից յետ դարձան Սպարտացիների գերիներ։ Աթենացւոց և Սպարտացւոց գաղթականութիւնք տակաւ առ տակաւ նուաճուեցան և նոցա բնակիչները ստրուկներ դարձան։

Նոյնպէս Աթենացի զօրաց մի մասն, որ մնաց Սիկիլայում, դարձաւ Սիրակուզացւոց ստրուկ։ Ստրկութեան զարգացման հետ Յոյները կորցնում են իրանց համակրութիւնը դէպի աշխատանք։ Քը-

սենոփոնտն և Պլատոնն իրանց ծրագրում հասարակապետութեան համար անհրաժեշտ համարեցին սորկաց դասի գոյութիւնն, որպէս զի վերջինները մշակութիւն անեն քաղաքացւոց համար և սրանց միջոց տան պաշտպանելու հասարակապետութիւնն և պարապելու գեղարուեստներով ու գիտութիւններով։ Սորկաց ազատութիւնն աւելի և աւելի գժուարացաւ։ Ազատ Աթէնքում խստութեամբ արգելուած էր թատրոններում խաղարկուող գրուածոց մէջ մինչև անգամ թեթև ակնարկ անելու սորկաց ազատութեան մասին։ Արխտոփանի ժամանակ Աթէնքում ստրուկների թիւը հասաւ 400,000 ի, այնինչ ազատ քաղաքացւոց թիւը 21,000 էր։ Լակոնիաում (Սպարտա) ազատութիւն չտալու համար այն ստրուկներին, որոնք արժանացել էին ազատութեան իրանց արիւնով և վէրքերով պատերազմներում, մինչև անգամ գաղտնի սպանութիւն էին գործ դնում։ Երիտասարդ Սպարտացիք մի անգամ կոտորեցին մօտ 2000 իլուներ, որոնք ազատութեան իրաւունք ունեին։

Չնայելով այս միջոցներին Պելոպոննեսեան պատրազմի վերջին ժամանակ Սպարտյառում գոյութիւն ունէր հին գերդաստանների միայն տասներորդ մասը, մնացած իննը տասներորդականն ազատ գերդաստանների ծագում էր ստրուկներից։ Այս վերջիններից էին անուանի Կալլիկրատիդներն ու Լիզանդրներն, որոնք երեկոյի եղան Պելոպոննեսեան պատերազմում։ Իրաւ է, եղան մարդիկ, որոնք համոզում էին Յոյներին ազատութիւն տալ ստրուկներին և սկսել աշխատանքի և յառաջադիմութեան նոր կեանք վարել — բայց այդ եղան միայն ձայն բարբառոյ յանապատի։

Քերովնէայի յաղթութիւնից յետ, չորրորդ դարի կիսում Քըլստոսի ծննդից առաջ, ատենաբան Հիպերիդէսը խորհուրդ տուեց Աթենացիներին ազատել և զինաւորել ստրուկներին և հաստատամբ տութեամբ դիմադրել Փիլիպոս Մակեդոնացուն։ Բայց Աթէնացիք աւելի լաւ համարեցին ենթարկուել Փիլիպոսի իշխանութեան, քան համաձայնել սորկաց ազատութեանը։ Հիպերիդէսի վարձն իւր աղնիւ մտքի համար եղաւ աքսորը։ Հին գաղափարներն և հակարութիւնը դէպի աշխատանք աւելի ամրացան Յունաց մէջ նոցա յաղթութիւններից յետոյ Ասիայում Աղէքսանդր Մեծի առաջնորդու-

թեամբ։ Արիստոտելն առաջ է բերում և յիշում Եւրիպիդէսի հին ասացուածքը, թէ Յոյնն պէտք է իշխէ բարբարոսի վերայ և ջանք է անում ապացուցանելու այս տարբերութեամբ ըմբռնողական ընդունակութեան, որ տուած է Յոյնին և բարբարոսին, այնպէս ինչպէս մեր ժամանակ ստրուկների տէրերը նոյնպիսի պատճառաբանութիւն առաջ էին բերում ազատութեան կուսակիցների դէմ։ Մեծ փիլիսոփան մոռանում էր, որ Յոյները տէր և իշխող էին դառնում ոչ միայն բարբարոսների այլ և նոյն իսկ Յոյների վերայ։

Աղեքսանդր Մեծը Լեկտրայի և Մանդինէայի յաղթութիւններից յետ Թեբացիներին վաճառեց ի ստրկութիւն։ Աղեքսանդրից և Անտրիպատրից յետոյ, Յունաստանն իսկոյն խորտակեց իւր լուծն և սկսաւ ներքին պատերազմ, որ այնքան նրան թուլացըց, որ նա ընկաւ օտար իշխանութեան ներքոյ։ Մէկ ու կէս դար Արիստոտելից յետոյ, Յոյները սկսան իրանց ոգեսով դաստիարակել Հռովմայեցիներին և սրանց ներշնչեցին նոյն ապականութիւնը բարուց և նոյն խստաբրտութիւնը դէպի ստրուկներն, որոնց համար իրանք այնպէս չարաշար տուժել էին։ Պաւլոս Էմիլիոսը Եպիրոսում աճրդախօսութեամբ գնեց բազմաթիւ փիլիսոփայ, մատենագիր, քերթող, բանաստեղծ Յոյներ և բերեց Հռովմայ և ահա այս նոր ստրուկներն իրանց անձանց վերայ աւին ստրկութեան անարդարութեան փորձը։ Բարուկների բազմութիւնը հռովմում, յախտնական քաղաքում, բարուց ապականութեան աղբիւը դարձաւ նորա երբեմն մեծ քաղաքացիների համար, որոնք նշանաւոր էին աշխատասիրութեամբ և կեանքի պարզութեամբ։ Ստրկութիւնը դարձաւ խմոր, որ խմորեց, լուծեց հռովմէական հաստատուն և պատերազմասէր հասարակութիւնը։ Յիշենք, որ Հռովմը բոլորովին այլապէս սկիզբն առաւ, քան Յոյն հասարակապետութիւնք։ Նա սկզբում ապաստանարան էր այնպիսի անձանց, որոնք որոնում էին փոփոխութիւն իրանց ընկերավարական վիճակին։ Քախատական ստրուկները Հռովմը բնակիչների նշանաւոր տարբերից մէկն էին կազմում։ Այս պատերազմասէր եղբայրութեան անդամներն երկար ժամանակ սրբութեամբ պահպանում էին օրէնքն, որ բոլոր քաղաքացիներին համարում էր ազատ և հաւասար։ Հռովմայեցիք, նուանելով դրացի ազգերին։ Արանց ոչ թէ ստրուկ էին դարձը-

նում, ինչպէս Յոյներն, այլ քաղաքացիք հաւասար իրաւունքներով։ Հարստութեան և սրան յարակից թուղամորթութեան և մեղկութեան առաջն առնելու համար, Հռովմի նախկին օրէնքները շատ սահմանափակեցին Հռովմի քաղաքացւոց հողային սեպհականութեան չափը (երկու եռուգէր): Այս կալրուածի արդիւնքը բաւական չէր բազմաթիւ ստրուկներ կերակրելու համար. Հռովմայեցին կարող էր միայն երկու ստրուկ ունենալ և սոքա աւելի նորա ընտանեաց անդամներ էին քան ստրուկներ. Նա սրանց հետ աշխատում էր, հանգստանում, նրանց ուրախակից էր և տրտմակից։ Թագաւորների ժամանակ, միայն սոքա համեմատաբար ունէին աւելի բազմաթիւ ստրուկներ։

Հին Հռովմում ստրուկների վիճակը թեթևանում էր ի պատիւ Սատուրնի մարտ ամսում և զոհարերութեանց ժամանակ կատարուող տօնախմութիւններով, որոնց ժամանակ ստրուկները վայելում էին ազատութիւն և իրանց ժամանակը զուարճութեանց մէջ էին անցնում։ Ստրկին դժուար չէր ազատութիւն ձեռք բերելն և ստրկական ծագումն անպատութիւն չէր համարուում։

Սերվիս Ցուլիս թագաւոր ստրկուհոյ զաւակ էր։ Կաննայի պատերազմից յետ Հռովմայեցիք 8000 ստրուկներ ազատեցին և զինաւորեցին։ Յունաստանը նուաճելից յետ, Հռովմն ոչնչացրեց իւր ախոյեան Կարթագինէն, բայց նա իւր վերայ առաւ այս վրէծխընդրութեան վնասուց փորձը։ 150 հազար Եպիրացիք և 50 հազար Կարթագինացիք ստրուկ դարձան և բերուեցան Հռովմ և կարծես հէնց այս ժամանակից այս քաղաքն, որ ստրկութեամբ թուղացած այլ ազգերին յաղթում էր, ինքն էլ պկսաւ վարակուել այդ ախտով։